

տիւ Փասքալ Յակոբ աղա Առուրատեանին, որ ինչպէս ուրիշ անգամ ըսած եմք, Աւստրիայ հիւպատոսարանի քարտուղարն ըլլալով՝ այս անգամ մեծապատիւ Վալբէր հիւպատոսը հայրենիքը մեկնելուն՝ իւր տեղը փոխանորդ կարգեց :

— Յիշեալ թուականէն երկու օր առաջ, Աղեքսանդրիայ աւստրիացի երեւելի վաճառականի մի խանութ գողեր մանելով, և զարդուց վերաբերեալ թանկագին ապրանքներ գողցած ըլլալով, ինչպէս ուրիշ տեղեր՝ նոյնպէս եւ հոս լուր խրկուած էր առ յիշեալ մեծապատիւ փոխ — հիւպատոս Յակոբ աղայն, որ անմիջաւ պէս հետագառութեան ետեւէ լինելով՝ քանի մի կտոր բան յայտնեց, զորոնք հոս ժամագործի ծախած էին անարդ գիներով, և իրենք աներեւոյթ եղած էին : Յիշեալ ապրանքները ձեռք բերելով՝ խրկեց իւր տիրողը :

— Օդոստոս ամսոյն 15 ին քաղաքացի այլազգի երիտասարդի մի ըսպաննուած մարմինը բերին հոս, որ 15 օր առաջ թամարացի ըսուած վլրանաբնակ մողովսդոց քով գացած էր առուտուրի համար իւր մէկ ընկերոջը հետ : Այս վերջինը իմանալով անոր մօտակայ վրանի տակ չարչար սպաննուիլը, անմիջապէս ձի հեծնելով կը փախչէ հետը ունելով 200 մաճառ ոսկին, զոր ընկերին քով կարծելով սպաններ էին : Չարագործ Յորդանանու կողմերը շունչը առնելով՝ աղատ կը համարի իւր հետամուտներէն :

— Աղեքսանդրիա բնակող կեսարացի Աշոտեան մեծապատիւ և բարեպաշտօն Յակոբ աղայն, որ անցեալները սուրբ Աթոռոյս մէջ տըպ-

ուած գըքերէն մէկ մէկ օրինակ նըւէր ըրած էր Թալասու գպրոցին, այս անգամ եւս բարեհաճեցաւ մէկ օրինակ Ախօն նուիրել յիշեալ գպրոցի Արշակունեաց ընկերութեան :

Ամենապատիւ Տ. Տ. Եսայի Արուբազան Պատրիարքը օգոստոս ամսոյ Տ1 ին ի Յոպակ մեկնեցաւ, որոյ նըւպատակն է՝ եղած և ըլլալիք շինութիւններն ու նորոգութիւնները աչքէ անցընել :

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՋ. Ք

Կիրք քան թէ Ճշմարտութիւն՝ առաջնորդեն լեզուի և գրչի բազմաց :

Փառասիրութեան և ընչափաղութեան կիրք չերանան երբէք :

Փառասէրք կարգեն զդնացս իւրեանց ոչ ըստ միտս՝ այլ ըստ օգտի իւրեանց :

Օրէնք չեն յառաջատես ամենոյն դիմուածոց, վասն որոյ իշխանաւորք կարող են զթերին լնուլ զօրինացն, և եւս փոփոխութիս իսկ մուծանել :

Են արք՝ որք քաջ գիտեն ձգել ըլլտիմար բազմութիւնն ի զարմացումն իւրեանց, այլ են ապարդիւն :

Օքր շուք ոչ ստանան մեծարուանձինք, եթէ փոխանակ յաջաց հանելոյ զմիմեանս ստորաքարշ չարութեամբ, ջանայցեն ընդհակառակն բարձրացուցանել զարարս միմեանց փոփոխակի :

Մեծարանք ընծայեալք առաքինութեան, Ճշմարիտ տանջանք են նաև անձու :

Համարձակութիւն ընդ գիտութեան լծորդեալ՝ է վասնգաբեր, ընդ անգիտութեան՝ եւ մահաբեր :